[1] Դուրս գրման ամսաթիվ		
10	Հոկտեմբեր	2019 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
10	Հոկտեմբեր	2019 թ.

Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	4798032751

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	
[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Արտադրանք, ապրանք առաքող անձի									
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)		0	6	9	0	2	0	8	7
[9] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)								
[10] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100							
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57								
[12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57								
[13] Լրացուցիչ տվյալներ									

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի									
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)		0	2	6	3	1	2	6	3
[15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ								
[16] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834							
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								
[18] Լրացուցիչ տվյալներ									
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն								
	Լիազորագիր	Համար							
		Ամսաթիվ							
[20] Մատակարարման (առաքման) եղանակը									
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 18156519 բ/գ,	հատ	1	39400	39400
Ընդամենը					39400

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

10/10/2019 10:40:09

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

16 օգոստոսի 2019թ. ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչ, երրորդ դասի խորհրդական՝ Պարույր Նալբանդյանս, քննարկելով վարույթումս քննվող 18156519 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

15.03.2019 թվականին, Շիրակի մարզի դատախազությունից, թիվ 64/932-2-19 գրությամբ ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժին է ստացվել «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության գործադիր տնօրեն Ն.Բաղդասարյանի կողմից՝ 12.03.2019 թվականին՝ Շիրակի մարզի դատախազություն հասցեագրված թիվ 96 գրությունը՝ հոգեբուժական բաժանմունքում պահվող Կամսար Գուրգենի Հովհաննիսյանի կողմից խուլիգանական վարքագիծ դրսևորելու փաստի վերաբերյալ, ինչի կապակցությամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով՝ ոստիկանության Մուշի բաժնում նախապատրաստվել են նյութեր:

Նյութերի նախապատրաստման ընթացքում՝ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության գործադիր տնօրեն Նադյա Վարդանի Բաղդասարյանը բացատրությամբ, այնուհետև իր տված ցուցմունքում հայտնել է, որ սույն թվականի փետրվարի 1-ին, Շիրակի մարզի Ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարանը որոշում է կայացրել՝ ՀՀ քննչական կոմիտեի ՇՄ քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի ներկայացրած՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված թիվ 68108618 քրեական գործով մեղադրյալ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանի նկատմամբ անվտանգության միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել և արդյունքում՝ նույն օրը՝ վերջինս տեղափոխվել է իրենց կենտրոնի հոգեբուժական բաժանմունք: Նադյա Բաղդասարյանը պարզաբանել է, որ ընդունման օրվանից Կամսար Հովհաննիսյանը ցուցաբերում է ագրեսիվ վարք, չի ենթարկվում կարգ ու կանոնին, սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցնում աշխատակիցների՝ այդ թվում կին աշխատակիցների հասցեին, անհանգստացնում է բաժանմունքի հիվանդներին, աշխատակիցներին սպառնում է սպանել՝ մանրամասնելով, որ եղել է դեպք, երբ սեռական բնույթի հայհոյանքներ կատարելով՝ փորձել է հարձակվել մատուցողուհու վրա, սակայն սանիտարը թույլ չի տվել:

Գյումրու ՀԱԿ-ի հոգեբույժ՝ Գյումրի քաղաքի, Մուշ 2 թաղամասի, 11 փողոցի, 5 շենքի, 31 բնակարանի բնակիչ Գագիկ Հենրիկի Մխիթարյանը նույնաբովանդակ բացատրությամբ և ցուցմունքով հայտնել է, որ հոգեբուժական բաժանմունք ընդունվելու օրվանից՝ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը ցուցաբերում է ագրեսիվ վարք, ինչն արտահայտվում է անվայելուչ պահվածքով, հիվանդների և աշխատակիցների հասցեներին հնչող հայհոյանքներով, աշխատակիցների և հիվանդների վրա հարձակման փորձեր կատարելով: Անդրադառնալով՝ սույն թվականի մարտի 9-ին կայացած նմանատիպ վերջին միջադեպին՝ Գագիկ Մխիթարյանը պարզաբանել է, որ այդ օրը, առանց որևէ պատճառի՝ կեսօրից սկսած՝ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը սկսել է սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնել մատուցողուհի Մարիամի, սանիտար Վոլոդյա Գրիգորյանի և նաև իր հասցեին, որոնք շարունակվել են մինչ գիշեր, իրեն հատկացված դեղահաբերը շպրտել է հատակին, պահանջել է բացել բաժանմունքի դուռն ու իրեն ազատ արձակել, փորձել է հարձակվել աշխատակիցների վրա՝ հավելելով, որ այդ ամենը գրառվել է ինչպես բաժանմունքի մատյանում, այնպես էլ հիվանդի հիվանդության պատմագրում՝ բացատրությանը կից ներկայացնելով գրառումների փաստը հավաստող փաստաթղթերի քսերոպատճենները: Գագիկ Մխիթարյանը հայտնել է, որ Կամսար Հովհաննիսյանն իր ագրեսիվ վարքագծով խաթարում է բաժանմունքի նորմալ աշխատանքը, իրական վտանգ է ստեղծում բաժանմունքի հիվանդների և բուժանձնակազմի համար, անհարկի վեճի առիթներ է ստեղծում բոլորի հետ՝ հավելելով, որ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանի կողմից նման խուլիգանական գործողությունները կրում են արդեն սիստեմատիկ

հաստատել են նաև կենտրոնի սանիտար մատուցող Մարիամ Կարապետի Մարտիրոսյանը,Գոհար Ֆրունզիկի Սահակյանը, սանիտար Վլադիմիր Սամվելի Գրիգորյանը, սանիտար Աշոտ Մերուժանի Սանթրոսյանը, բուժքույր Լիլիթ Արմենի Սարգսյանը, քույր-տնտեսուհի Նելլա Տաճատի Գևորգյանը, ինչպես նաև հիվանդներ Վահրամ Հարութի Վարդևանյանը, Վանո Վարդանի Վարդևանյանը, Վարդգես Սամվելի Բաբայանը:

2019 թվականի օգոստոսի 15-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված 1-ին մասով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար Կամսար Գուրգենի Հովհաննիսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2019 թվականի օգոստոսի 15-ին Կամսար Գուրգենի Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ որ նա ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված թիվ 68108618 քրեական գործով որպես անվտանգության միջոց «հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը» կիրառելու և «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունում տեղավորելու մասին Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշման համաձայն 01.02.2019 թվականից գտնվելով հիշյալ բուժհաստատության հոգեբուժական բաժանմունքում, 2019 թվականի մարտի 9-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, պահանջել է հանդիպում հաստատության տնօրեն Ն.Բաղադասարյանի հետ, սակայն սանիտար-մատուցող Մարիամ Մարտիրոսյանի և սանիտար Վլադիմիր Գրիգորյանի պատասխանից, որ հանգստյան օր լինելու պատճառով տնօրենն աշխատանքի չի եկել, Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը զայրացել է, հասարակության և բարոյականության համընդհանուր ճանաչում ստացած նորմերն արհամարհելու, շրջապատին և հասարակությանը՝ «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության աշխատակիցներին ու այնտեղ բուժում ստացող հիվանդներին հակադրվելու և հակազդելու հանդուգն ցանկությամբ իր անձի «առավելություններն» ընդգծելու մոլուցքով կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը՝ նշված կազմակերպության նորմալ գործունեությունը և արտահայտելով բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ՝ սեռական բնույթի հայհոյանքներ և վիրավորական արտահայտություններ է կատարել, չի ենթարկել հոգեբուժարանի աշխատակիցների պահանջներին՝ այն է դադարեցնել ագրեսիվ վարքագծի դրսևորումը և անհարգալից վերաբերմունքը աշխատակիցների ու հիվանդների հանդեպ, որպիսի գործողությունները տագնապ են առաջացացրել այդ անձանց իրավունքների ու շահերի կապակցությամբ, և շուրջ 15-20 րոպե տևողությամբ շարունակել է վիրավորական արտահայտություններ ու սեռական բնույթի հայհոյանքներ կատարելը վերջիններիս հասցեներին՝ չենթարկվելով կարգուկանոնին, ինչի արդյունքում նրա նկատմամբ բժշկի ցուցումով կիրառվել է ֆիզիկական զսպման միջոց՝ ձեռքը և ոտքերը ֆիքսելով: Կամսար Հովհաննիսյանի այդ կերպ պահվածքի արդյունքում տևական ժամանակ խաթարվել է բժշկական հաստատության բնականոն աշխատանքը և բուժվող հիվանդների հանգիստը, ինչով պայմանավորված՝ խախտվել է նաև հիվանդների սննդի և դեղորայքի ընդունման ժամերը:

2019 թվականի օգոստոսի 16-ին որոշում է կայացվել Գյումրու հոգեկան առողջության կենտրոնից առգրավել Կամսար Գուրգենի Հովհաննիսյանի հիվանդության պատմագիրը:

Այսպիսով՝ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդված 1-ին մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքները մեղավորությամբ կատարելու համար:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ, 248-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 18156519 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ա/ Մեղադրյալ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ է տառապել և երբվանից:

բ/ Եթե Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկել է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

գ/ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը ներկայումս տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի:

դ/ Եթե Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, ինչպես նաև վերջինս կարող է մասնակցել քննչական և դատաքննչական գործողություններին:

ե/ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

զ/ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում, հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ և հակացուցված չէ արդյոք բուժումը:

է/ Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը իր հոգեկան վիճակով պայմանավորված կարող է արդյոք մասնակցել դատավարական և քննչական գործողություններին:

3. Փորձագետներին պահանջով տրամադրել քրեական գործի նյութերը և վերջիններիս պահանջով փորձաքննության կատարման վայր կներկայացվի փորձաքննվող Կամսար Գուրգենի Հովհաննիսյանը:

Քննիչ՝ **Պ.Ս. Նալբանդյան**